Մրցույթի հայտարարություն

ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի

դասախոսի թափուր տեղի համար

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի «Հայոց լեզու» (720 ժամ) առարկայի դասախոսի թափուր տեղի համար:

Հանրակրթական առարկա վարող դասախոս կարող է լինել այն անձը, որն ստացել է բարձրագույն կրթությամբ մանկավարժական համապատասխան որակավորում կամ ունի բարձրագույն կրթություն և վերջին տասը տարվա ընթացքում տվյալ առարկայի մանկավարժական (կամ ուսուցչական) գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժ:

Մրցույթը անցկացվում է բանավոր՝ հարցազրույցի միջոցով, յուրաքանչյուր մասնակցի հետ առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3) անձնագիր (բնօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
8) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերը ընդունվում են մինչև օգոստոսի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-16:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Մրցույթը տեղի կունենա օգոստոսի 27-ին, ժամը 11:00-ին, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջում, հասցեն՝ Մամիկոնյանց 52:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (011)-20-96-01: